ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ «ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱԼԵԶԻ «ԱՐԵԳԱԿ» ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնք
բն. Արալեզ, Թումանյան 10, 093315808, aralez.aregak.nuh@mail.ru

N 29
08.05.2026թ.

Գոռ Գալստյան Ա/Ձ -ին
(ՀՎՀՀ 47974061, էլ հասցե transfers@acba.am)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

2026 թվականի հունվարի 07-ի «ԱԱՄ-ԳՀԱՊՁԲ-26/02» ծածկագրով
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Վեդի համայնքի Արալեզի «Արեգակ» ՆՈՒՀ» ՀՈԱԿ (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գոռ Գալստյան Ա/Ձ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 2026 թվականի հունվարի 07 կնքվել է սննդամթերքի մատակարման N ԱԱՄ-ԳՀԱՊՁԲ-26/02 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն որի՝ վաճառողը ստանձնել է գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքի մատակարարման պարտավորությունը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ վաճառողը պարտավորվում է սույն Պայմանագրով կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-

ժամանակացուցով նախատեսված ապրանքը իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար :

Պայմանագրի 2. 1 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի

Պայմանագրի 2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի,

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պատվիրատուն միակողմանի և ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա

պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները :

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 90870 (իննսուն հազար ութ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը 136303 (հարյուր երեսունվեց հազար երեք հարյուր երեք) ՀՀ դրամ, փոխանցել ԱԿԲԱ ԲԱՆԿ ՓԲԸ Վեդի մասնաճյուղ՝ 220129690396000 հաշվեհամարին:

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարները սույն ծանուցումը ստանալու պահից հաշված 8 /ութ/ օրվա ընթացքում փոխանցվի նշված հաշվեհամարին, ապա Կապալառուի նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

Տնօրեն՝ Տ.Շահինյան